



PRIMA  
CLASSIC

HASMIK TOROSYAN  
GIULIO ZAPPA

FOLK SONGS BY KOMITAS

SOUNDS OF  
ARMENIA



## CD 1

1. Երկինքն ամպել է | **The Sky is Cloudy**
2. Հով արեք | **Bring Coolness**
3. Էս առուն | **This Water Stream**
4. Ծիրանի ծառ | **Apricot Tree**
5. Զուր կուգա վերին սարեն | **Water Streams Down the Upper Hill**
6. Ախ, մարալ ջան | **Oh, Lovely Deer**
7. Զուլո | **Zulo**
8. Շողեր ջան | **Dear Shogher**
9. Ես աղջիկ եմ | **I Am a Girl**
10. Քելեր, ցոլեր | **Walking, Shining**
11. Կաքավի երգը | **Partridge Song**
12. Կուժն առա | **I Took the Jug**
13. Մարոն ա կայնե | **Maro is Standing**
14. Լե լե յաման | **Le Le Yaman**
15. Օրոր | **Oror (Lullaby)**

## CD 2

1. Լորիկ | **The Quail**
2. Քելե քելե | **Walk, Walk**
3. Անտունի | **Antouni**
4. Գարուն ա | **It's Spring**
5. Ես սարեն կուգայի | **I Was Coming from the Mountain**
6. Չեմ կրնա խաղա | **I Can't Sing and Dance**
7. Զինչ ու զինչ | **What, What?**
8. Չինար ես | **You Are a Plane Tree**
9. Հոյ նազան | **Hey Nazan**
10. Կռունկ | **The Crane**
11. Քուն եղիր, պալաս | **Rest, My Baby**
12. Կանչե, կռունկ | **Call, Crane**
13. Գարուն | **Spring**
14. Ալագյազ | **Alagyz**
15. Խնկի ծառ | **Incense Tree**





A dream of the years, a call of the blood, a duty of the soul,  
a priceless treasure for me, which encompasses the magnificent  
melodies of my beautiful and ancient country. The melodies  
without which my soul is empty, my existence is incomplete.

Տարիների երազանք, արյան կանչ, հոգու պարտք, ինձ  
համար անգին մի գանձ, որի մեջ ամփոփվում են  
դարավոր պատմություն ունեցող իմ չքնաղ հայրենիքի  
անզուգական մեղեդիները. առանց դրանց հոգիս  
դատարկ է, գոյությունս՝ ոչ լիարժեք:





# KOMITAS


(1869-1935)

Komitas (Sghomon Sghomonyan) was an Armenian composer, musicologist, medievalist, ethnographer-folklorist, choirmaster, singer, and poet. He was a clergyman in the rank of an archimandrite. Komitas received his education at the Etchmiadzin Seminary; later he studied in philosophy department at Kaiser University in Berlin and at the Richard Schmidt private conservatory in Berlin. He is considered the founder of the Armenian national tradition of art music.

Up until the 19th century, the main branches of Armenian music had been evolving within the confines of monodic art, adhering to its traditional attributes. The European art of music composition made its way into Armenian culture in the mid-19th century. The earliest compositions by Armenian composers that emerged during that time were mostly based on the principles of European polyphonic music.

Komitas was able to create a polyphonic style that was consistent with Armenian musical thinking by carefully studying the theoretical principles and unique features of Armenian monodic music. He, in particular, created a unique harmonic system based on the harmonic features of Armenian monodic music. It was both naturally familiar to Armenians and simple for a European audience to understand. Komitas' system emerged as a pioneering phenomenon in the music of the early 20th century.

Regrettably, Komitas' turbulent life has resulted in significant losses to his heritage. Nonetheless, what survives is a diverse and abundant legacy. The collection encompasses the composer's original compositions, an extensive anthology of traditional songs and instrumental tunes he transcribed, musicological research, publicist articles, and educational handbooks. Among the extant materials are recordings of Komitas' vocal performances, including his roles as an accompanist, from the early 1910s.





In his work, Komitas attached significant importance to the group of genres that best exemplify traditional music, primarily songs for voice and piano and choral songs. Therefore, the arrangements of Armenian folk songs and the canonical sacred monodies from the Middle Ages that have come to us constitute the cornerstone of Komitas' artistic heritage. These compositions are inspired by traditional songs and, despite being based on traditional song samples, perfectly capture the essence of his individual style.

His piano compositions, and particularly the seven-dance series (suite), follow the same concept and represent a separate layer within his work. Additionally, there are romances, chamber-instrumental and orchestral pieces, four unfinished opera projects, and other pieces from his student years.

One of the large-scale compositions in Komitas's legacy is Patarag (Mass), a work of the cantata-oratorio genre based on extant Armenian medieval monodies. The composer worked on this composition throughout his life. There are about ten versions, written in different years. The version for male choir, written between 1914 and 1915, has been preserved intact. Komitas intended it for both ceremonial and concert performances. A cycle of choral pieces based on traditional wedding songs, best known as Wedding Songs, II Cycle, has all the characteristics of the oratorio. This work derives its dramaturgical structure from an ancient Armenian wedding ceremony.

A significant part of Komitas' musical legacy is his choral compositions, whose genre subtypes relate to different aspects of everyday life—from romantic feelings to work routines—while also reflecting Christian memories of ancient ritual culture.

Another important statement of Komitas' musical heritage is his songs for voice and piano. Fifty-eight such compositions have been preserved, and up to date, all of them have been published. These are mostly works based on Armenian peasant songs reflecting love feelings, jokes, everyday life, labor, and other scenes. Along with this, there are also arrangements of Armenian urban songs, songs composed by the composer himself based on the original tunes, songs drafted for theatrical performances, etc.

Komitas' work and artistic legacy have played a key role in the history of the Armenian music and in the crystallization of the Armenian national identity paradigm.

**Mher Navoyan**

*Doctor of Arts, Professor*



# ԿՈՄԻՏԱՍ

(1869-1935)

Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) հայ կոմպոզիտոր է, երաժշտագետ, միջնադարագետ, ազգագրագետ-բանահավաք, խմբավար, երգիչ և բանաստեղծ: Հոգևորական էր, ուներ վարդապետի աստիճան: Կրթվել է Էջմիածնի հոգևոր ձեմարանում, ապա Բեռլինի Կայսերական համալսարանի փիլիսոփայական բաժնում և Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում: Նա համարվում է հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը:

Մինչև XIX դար հայ երաժշտության հիմնական ճյուղերը զարգացել են որպես ավանդական նկարագիր ունեցող մոնոդիկ արվեստի արտահայտություն: XIX դարի կեսին եվրոպական կոմպոզիտորական արվեստը ներթափանցեց հայ իրականություն: Ի հայտ եկան առաջին հայ կոմպոզիտորական ստեղծագործությունները, որոնք հիմնականում եվրոպական բազմաձայն արվեստի սկզբունքներով ստեղծված գործեր էին: Ուսումնասիրելով հայ մոնոդիկ երաժշտության տեսական հիմքերն ու առանձնահատկությունները՝ Կոմիտասին հաջողվեց դրանց հիման վրա ստեղծել հայ երաժշտական մտածողությանը հարազատ բազմաձայնություն: Մասնավորաբար, նա կարողացավ հայ մոնոդիկ երաժշտության լադային առանձնահատկությունների հիման վրա կառուցել հարմոնիկ նոր համակարգ, որ խիստ ազգային նկարագիր ուներ, սակայն միևնույն ժամանակ հասկանալի էր եվրոպացի ունկնդրին և XX դարասկզբի նորարարական դրսևորումներից էր:

Կոմիտասի թողած ժառանգությունը իր բարդ կենսագրության բերումով, ցավոք, բազմաթիվ կորուստներով է մեզ հասել: Սակայն այն, ինչ պահպանվել է, բազմաշերտ ու հարուստ ժառանգություն է: Այն բաղկացած է կոմպոզիտորական ստեղծագործություններից, երաժշտական-ազգագրական հավաքածուից՝ հեղինակի գրառած հազարավոր ժողովրդական երգերից ու նվագներից, երաժշտագիտական ուսումնասիրություններից, երաժշտական-հրապարակախոսական հոդվածներից ու կրթական նշանակության նախագծերից: Պահպանվել են նաև Կոմիտասի երգային կատարումների (նաև որպես դաշնակահար-նվագակցող) 1910-ականների սկզբին արված ձայնագրությունները:

Կոմիտասն իր արվեստում կարևորեց նաև ավանդական երաժշտությանն առավել հասուկ ժանրային կազմը: Այն հիմնականում երգային և խմբերգային ժանրերի ամբողջություն է: Ուստի Կոմիտասի կոմպոզիտորական ժառանգության հիմքը կազմում են հայ ժողովրդական երգերի, միջնադարից ավանդված հոգևոր մոնոդիաների մշակումներ: Դրանք ավանդական երգային հիմքով կոմպոզիտորական ստեղծագործություններ են, որ թեև հենվում են ավանդական երգային օրինակների վրա, սակայն լիարժեքորեն արտացոլում են կոմպոզիտորի անհատական մտածողության առանձնահատկությունները:





Առանձին շերտ են կազմում նրա՝ նույն սկզբունքով ստեղծված դաշնամուրային գործերը, հատկապես յոթ պարերից կազմված պարաշարը (սյուիտ): Դրանց կողքին կան նաև ուսանողական շրջանի նվագախմբային, կամերային-գործիքային երկեր, ողմանսներ, անավարտ օպերաների չորս նախագիծ և այլ ստեղծագործություններ:

Կոմիտասի ժառանգության մեծակտավ երկերից է «Պատարագը», որը պահպանված հայ միջնադարյան մոնոդիաների հիման վրա ստեղծված կանտատ-օրատորիալ ժանրի ստեղծագործություն է: Հեղինակն իր ողջ կյանքի ընթացքում աշխատել է «Պատարագ» ստեղծելու ուղղությամբ: Տարբեր տարիներին ստեղծված շուրջ տասը տարբերակներից ամբողջական տեսքով մեզ հասել է 1914-1915 թվականներին արական երգչախմբի համար գրված տարբերակը: Կոմպոզիտորն այն նախատեսել է թե՛ ծիսական, թե՛ համերգային կատարման համար: Օրատորիայի վառ ընդգծված հատկանիշներ ունի նաև հարսանյաց ավանդական երգերի հիման վրա ստեղծված խմբերգերի շարքը, որ առավել հայտնի է «Հարսանյաց երգեր, շար II» անունով: Դրա հիմքում, որպես դրամատուրգիական հիմք, ընկած է հայկական հարսանիքի հնագույն ծեսը:

Կոմիտասի կոմպոզիտորական ժառանգության մեջ մեծ զանգված են կազմում նրա խմբերգերը, որոնց ժանրային ենթատեսակներն ընդգրկում են ժողովրդի կյանքի ամենատարբեր արտահայտություններ՝ սիրային պատում, աշխատանքային առօրյա ներկայացնող խմբերգերից մինչև վաղնջական ծիսական մշակույթի քրիստոնեական վերիուշ հանդիսացող խմբերգեր:

Կոմիտասի կոմպոզիտորական ժառանգության մյուս կարևոր արտահայտությունը մեներգերն են: Մեզ են հասել և այսօր արդեն հրատարակված են 58 մեներգ դաշնամուրի նվագակցությամբ: Դրանց գերակշիռ մասը հայ գեղջկական երգարվեստի արտահայտությունների հիման վրա ստեղծված գործեր են, որ արտացոլում են սիրային քնարերգության, կատակային, ժողովրդական կենցաղի, աշխատանքի և այլ դրվագներ: Այս երգերի կողքին կան նաև հայ քաղաքային երգերի կոմպոզիտորական մշակումներ, ամբողջությամբ հեղինակի կողմից հորինված երգեր, թատերական ներկայացումների համար գրված երգային օրինակներ և այլն:

Իր գործունեությամբ և թողած ժառանգությամբ Կոմիտասն առանցքային դեր ունի հայ երաժշտության պատմության մեջ և հայ ժողովրդի ինքնության պարադիգմի բյուրեղացման գործում:

## **Միեր Նավոյան**

*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր*



1. ԵՐԿԻՆՔՆ ԱՄԱԿԵԼ Է

Երկինքն ամպել է,  
Ի՛նչ անուշ թոն է.  
Գամ դռներն անցնեմ՝  
Հոգյակս հոն է:

Երկինքն ամպել է,  
Գետինը թաց է.  
Յարս քնել է,  
Երեսը բաց է:

Երկինքն ամպել է,  
Գետին շաղերով.  
Ես քեզ սիրել եմ  
Անուշ խաղերով:

Շորո՛ր դու, շեկլի՛կ յար,  
Տեսնեմ՝ դու ումն ես.  
Իրավ եմ ասում՝  
Դու իմ սրտումն ես:

1. THE SKY IS CLOUDY

The sky is cloudy,  
How sweet the rain is!  
I will come and pass through the door,  
My soul-mate is there.

The sky has become cloudy,  
The ground is wet.  
My lover is asleep,  
Her [his] face is open.

The sky is cloudy,  
The ground is wet with dew.  
I have loved you  
With sweet games.

You tittup, fair lover,  
I'll see whose beloved you are.  
I tell the truth:  
You are in my heart.

## 2. ՀՈՎ ԱՐԵՔ

Հո՛վ արեք, սարե՛ր ջան, հո՛վ արեք,  
Իմ դարդին դարման արեք:  
Սարերը հով չե՛ն անում,  
Իմ դարդին դարման անում:

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զո՛վ արեք,  
Վարար անձրև թափեք, ծո՛վ արեք,  
Գեշ մարդու օր-արևը  
Սև հողի տակով արեք:

Հո՛վ արեք, ամպե՛ր ջան, հո՛վ արեք,  
Իմ դարդին դարման արեք:  
Ամպերը հով չե՛ն անում,  
Իմ դարդին դարման անում:

Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,  
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրնե՛ր,  
Մի վե՛ր կացե՛ք, իմացե՛ք,  
Տեսե՛ք իմ սրտի ցավե՛ր:

## 3. ԷՍ ԱՌՈՒՆ

Էս առուն ջուր է գալի,  
Մի տեսեք՝ ո՞ւր է գալի:  
Գալիս է, գալիս է սեր անե:

Տանս տակին կա նոնի,  
Ես բարձ բերեմ, դու կոնի՛,  
Ես դու մի բաղում պիտենք,  
Դու չինարի, ես նոնի:

## 2. BRING COOLNESS

Bring coolness, dear mountains, bring coolness,  
Give a remedy for my pain.  
The mountains don't bring coolness,  
Nor cure my pain.

Clouds, clouds, bring some coolness,  
Drop heavy rain, create a sea,  
Bury under the black earth  
The life of the wicked.

Bring coolness, dear clouds, bring coolness,  
Give a remedy for my pain.  
The clouds don't bring coolness,  
Nor cure my pain.

You, mountains, valleys, fields, and waters,  
You, leisurely wellsprings,  
Get up and know,  
Look at my heart's pain.

## 3. THIS WATER STREAM

Water flows down this water stream  
Look – where does it flow my dear?  
Hey, darling, it's here to spread some love and cheer.

In my home grows a pomegranate tree,  
I'll bring you a pillow, and you lean,  
In one garden you and me,  
You are a plane tree, I am a pomegranate tree.



#### 4. ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Ծիրանի՛ ծառ, բար մի՛ տա, վա՛յ.  
Ճղներդ իրար մի՛ տա, վա՛յ.  
Ամեն մեջդ ման գալիս  
Ցավերս իրար մի՛ տա:

Հա՛, տվե՛ք, ե՛տ տվե՛ք, սա՛րեր,-  
հովն ընկավ,  
Սրտիս խնդում ծովն ընկավ.  
Գնա, էլ ետ չգա էս տարվա տարին,-  
Սև դարդն իմ վզովն ընկավ:

Հո՛վ, հո՛վ, հովն ընկավ,-  
Սրտիս խնդում ծովն ընկավ:

#### 5. ՋՈՒՐ ԿՈՒԳԱ ՎԵՐԻՆ ՍԱՐԵՆ

Ջուր կուգա վերին սարեն,  
Սարն ոլորելեն,  
Կթափի մարմար քարեն,  
Կաթ-կաթ ծորելեն:

#### 6. ԱՆ, ՄԱՐԱԼ ՋԱՆ

Ա՛խ, մա՛րալ ջան,  
Կոկոնս թոռմած մնաց,  
Ջա՛ն, գյա՛րալ ջան,  
Սիրտս կրակած մնաց.  
Ա՛խ, մա՛րալ ջան,  
Ի՛նչ անեմ իմ ապրելը,  
Ջա՛ն, գյա՛րալ ջան,  
Իմ աչքերը թաց մնաց:

#### 4. APRICOT TREE

Apricot tree, do not produce fruit, eh!  
Don't strike your branches on each other, eh!  
As long as I walk among you,  
Don't remind me of my sorrows.

Please, give, give back, mountains!  
The wind refreshed,  
The joy of my heart sank down in the sea.  
May this year go and never return,  
A dark trouble hangs around my neck.

Wind, wind, the wind came and refreshed,  
The joy of my heart sank down into the sea.

#### 5 WATER STREAMS DOWN THE UPPER HILL

Water streams down the upper hill,  
Whirling around with utmost skill,  
Dripping down the marble stone,  
Drops falling with a flowing tone.

#### 6. OH, LOVELY DEER

Oh, lovely deer,  
My flower-bud wilted,  
Oh, darling, lovely,  
My heart is left ablaze.  
Ah, lovely deer,  
How should I live?  
Oh, darling, lovely,  
My eyes are left wet.

## 7. ՉՈՒՆՈ

Հավա՛ր Չո՛ւն, մաղա՛թ Չո՛ւն,  
Քեզի տեսա՛ վառա, Չո՛ւն.  
Հավա՛ր Չո՛ւն, մաղա՛թ Չո՛ւն,  
Քեզի տեսա՛ վառա, Չո՛ւն.  
Բացվի՛ր, բացվի՛ր, բացվի՛ր,  
Բացվի՛ր, իմ վարդ Չո՛ւն:

Արևն ելավ կամար-կամար,  
Չո՛ւնն կապեց ոսկի քամար.  
Ես կմեռնիմ քեզի համար,  
Հավա՛ր Չո՛ւն, մաղա՛թ Չո՛ւն:

## 8. ՇՈԴԵՐ ՏԱՆ

Ամպե՛լ ա, ձու՛ն չի գալի,  
Շոդե՛ր ջան,  
Սարիցը տու՛ն չի՛ գալի.  
Շոդե՛ր ջան,  
Դու շորորա՛, դու՛ն օրորա՛,  
Շոդե՛ր ջան,  
Ամպի տակին ձու՛ն կերևա,  
Շոդե՛ր ջան,  
Սիրտս կրակով լցված,  
Շոդե՛ր ջան,  
Աչքերիս քու՛ն չի՛ գալի:  
Շոդե՛ր ջան,  
Դու շորորա՛, դու՛ն օրորա՛,  
Շոդե՛ր ջան,  
Ամպի տակին ձու՛ն կերևա,  
Շոդե՛ր ջան:  
Սարի գլխին ձու՛ն եկավ,  
Շոդե՛ր ջան,  
Շեկիկ յարս տու՛ն եկավ,  
Շոդե՛ր ջան,  
Ուն կերևա, ձու՛ն կերևա,  
Շոդե՛ր ջան,  
Բերդի տակին տու՛ն կերևա,  
Շոդե՛ր ջան:

## 7. ZULO

Hurry up, Zulo! Be careful, Zulo!  
I saw you and ignited, Zulo.  
Hurry up, Zulo! Be careful, Zulo!  
I saw you and ignited, Zulo.  
Blossom, blossom, blossom!  
Blossom, my rose Zulo!

The sun rose in an arch,  
Zulo tied her golden belt.  
I will die for you,  
Hurry up, Zulo! Be careful, Zulo!

## 8. DEAR SHOGHER

It is cloudy, but it doesn't snow,  
Dear Shogher,  
She hasn't come home from the mountain,  
Dear Shogher.  
You move gracefully,  
Dear Shogher,  
Snow appeared under the clouds,  
Dear Shogher.  
My heart is full of fire,  
Dear Shogher,  
I cannot sleep,  
Dear Shogher.  
You move gracefully,  
Dear Shogher,  
Snow appeared under the clouds,  
Dear Shogher.  
It snows on the mountains,  
Dear Shogher,  
My fair lover came home,  
Dear Shogher.  
Snow appeared, snow appeared,  
Dear Shogher,  
I see a house under the fortress,  
Dear Shogher.



## 9. ԵՍ ԱՂՋԻԿ ԵՍ

Ես աղջիկ եմ, հեր չունիմ,  
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե՛,  
Լե, լե, լե՛, լե, լե՛.  
Մի սրտացավ տեր չունիմ.  
Վա՛յ, լո, լո լո՛, լո, լո լո՛,  
Լո, լո, լո՛.  
Հորից, մորից զրկված՝  
Վա՛յ, լե, լե, լե՛, լե, լե, լե՛,  
Լե, լե, լե՛, լե, լե՛.  
Աշխատող աղբեր չունիմ:  
Վա՛յ, լո, լո լո՛, լո, լո լո՛,  
Լո, լո, լո՛:  
Ծագեց արևը սարեն.  
Կանչեց կաքավը քարեն,  
Սիրածս էլ ա ինձ տվեք,  
Լավանա սրտիս յարեն:

## 10. ԶԵԼԵՐ, ՑՈԼԵՐ

Զելեր, ցոլեր՝ իմ յարը,  
Արևի տակին  
Զելեր, ցոլեր՝ իմ յարը:  
Սարի սովոր,  
Մեն մենավոր,  
Շե՛կ տղա,  
Շո՛ղ արեգակ,  
Թո՛ղ արեգակ,  
Ե՛կ, տղա:

Զելեր, ցոլեր՝ իմ յարը,  
Ջա՛ն աչքի լուսին,  
Զելեր, ցոլեր՝ իմ յարը:  
Հով է, քնիր,  
Չով է, քնիր,-  
Ե՛կ, տղա,  
Հունձ ես արել  
Շատ բեզարել,  
Շե՛կ տղա:

## 9. I AM A GIRL

I am a girl, I have no father,  
Vay, le, le, le, le, le, le,  
Le, le, le, le, le.  
I don't have a compassionate carer,  
Vay, lo, lo, lo, lo, lo, lo,  
Lo, lo, lo.  
Deprived from father and mother,  
Vay, le, le, le, le, le, le,  
Le, le, le, le, le.  
I don't have a working brother,  
Vay, lo, lo, lo, lo, lo, lo,  
Lo, lo, lo.  
The sun rose over the hills,  
The partridge sang on the rocks,  
At least give my lover to me,  
And the wound in my heart will be healed.

## 10. WALKING, SHINING

My lover was walking and shining  
Under the sun,  
My lover was walking and shining.  
Accustomed to the mountains,  
Single and alone,  
You, blond boy!  
Shiny sun,  
Leave the sun  
And come, boy!

My lover was walking and shining  
What happiness in his eyes!  
My lover was walking and shining.  
It's cool, sleep!  
It's chilly, sleep,  
Come, boy!  
You reaped the harvest  
And grew very tired,  
You, blond boy!

## 11. ԿԱՔԱՎԻ ԵՐԳ

Արև բացվեց թուխ ամպերեն,  
Կաքավ թռավ կանաչ սարեն,  
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,  
Բարև բերավ ծաղիկներեն:  
Սիրունիկ, սիրունիկ,  
Սիրունիկ, նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղիկներով -  
Շուշան, նարգիզ, նունուֆարով:  
Քո տեղ լցված ցող ու շաղով,  
Քնես-կելնես երգ ու տաղով:

Քո թև փափուկ ու խատուտիկ,  
Պստի կտուց, կարմիր տոտիկ,  
Կարմիր-կարմիր տոտիկներով  
Կշորորաս ճուտիկներով:

Երբ կկանգնես մամոռոտ քարին,  
Սաղմոս կասես ծաղիկներին,-  
Սարեր-ձորեր զվարթ կանես,  
Դարդի ծովեն սիրտ կհանես:

## 11. PARTRIDGE SONG

The sun rose from behind dark clouds,  
The partridge flew from the green hill,  
From the green hill, the edge of the hill  
It brought greetings from the flowers.  
Pretty, pretty,  
Pretty, colorful partridge.

Your nest is weaved with flowers,  
With lilies, narcissus, and nuphar,  
Your home is damp with dew and water droplets,  
You sleep and wake with many songs.

Your wings are soft and dapple,  
Your beak is small, your feet are red.  
You tippup with your tiny red feet  
Surrounded by your little ones.

When you roost on a mossy rock,  
You'll recite a psalm to the flowers,  
You delight the hills and valleys,  
You present a heart to the sea of grief.



## 12. ԿՈՒԺՆ ԱՌԱ

Կուժն առա, ելա սարը,  
Չգտա Ֆիդան յարը.  
Ֆիդան յարը ինձ տվեք,  
Չքաշեմ ահ ու զարը:

Մեծ սարի հովին մեռնեմ,  
Շեկ տղի բոյին մեռնեմ,  
Մի տարի ա չեմ տեսել,-  
Տեսողի աչքին մեռնեմ:

Բլբուլը դարի վրա,  
Խնձորը սարի վրա.  
Սիրած սիրածի տային,  
Չոր գետնին՝ քարի վրա:

## 13. ՄԱՐՈՆ Ա ԿԱՅՆԵ

Մարոն ա կայնե խաս բախչի դուռը,  
Մեջքին ա զարկե Գանձակա նուռը,  
Ձեռն ա ծալե, վիզն ա ծուռը,  
Սիրտն ա հալե սիրավոր հուրը:

Երկինքն ա ամպե, կուգա մարմար ձյուն,  
Կուգա կթափի կանաչ սարերուն:  
Խավար ա պատե Մարոյի հոգուն,-  
Իր յարի սիրուն մնաց երեբուն:

## 12. I TOOK THE JUG

I took the jug and climbed the mountain,  
I didn't find my beautiful lover.  
Give my love to me,  
And I will not be afraid nor cry.

I love the breeze of the great mountain,  
I love the posture of the fair boy.  
I have not seen him for a year,  
I love the eyes of those who have seen him.

The bird is on the hill,  
The apple is on the mountain.  
They gave over my beloved,  
On solid ground – on stone.

## 13. MARO IS STANDING

Maro is standing at the princely garden door,  
She has brought a Gandzak pomegranate,  
Disappointed, her neck is askew,  
The flame of love has melted her heart.

The sky was cloudy, it was full of glistening snow,  
The snow spilled over the green hills.  
Maro's soul is covered with darkness,  
Without her beloved, she is left wavering.

#### 14. ԼԵ ԼԵ ՅԱՄԱՆ

Լե, լե, յամա՛ն  
Մեր տուն, ձեր տուն դիմաց – դիմաց,  
Լե, լե, յամա՛ն  
Հերիք անեմ աչքով իմաց,  
Յամա՛ն, յամա՛ն, յա՛ր:  
Արև դիպավ Մասիս սարին,  
Կարոտ մնացի ես իմ յարին.

#### 15. ՕՐՈՐ

Աղվոր ես, չունիս խալատ,  
Երթամ ո՞վ բերիմ բեխալատ.  
Օրո՛ր.  
Երթամ լուսնկան բերիմ,  
Լուսուն աստղերը բեխալատ:  
Օրո՛ր.  
Աղվոր ես, չունիս խալատ,  
Քու ամեն տեղդ է բեխալատ.  
Օրո՛ր.  
Դուն ալ խալատ բան մ'ունիս,  
Քուն չունիս՝ արթուն կուկենաս:  
Օրո՛ր:

#### 14. LE LE YAMAN

Le, le, yaman,  
Our house, your house standing across the street,  
Le, le, yaman,  
Just enough of a wink to let you grasp it,  
Yaman, yaman, my beloved!  
The sun touched Mount Massis,  
I am bereft of my beloved.

#### 15. OROR (LULLABY)

You are beautiful, you don't have flaws,  
Who can I fetch flawless?  
Lullaby.  
I will go and bring the moon,  
Flawless stars of light,  
Lullaby.  
You are beautiful, you don't have flaws,  
Every part of you is flawless,  
Lullaby.  
But you also have a flaw,  
You don't sleep, you stay sleepless.  
Lullaby.



## 1. ԼՈՐԻԿ

Գացի արտեր, բռնի լոր,  
Աղջիկ տեսա յայլի ծոր,  
Նման էր կարմիր խնձոր,  
Լո՛րիկ,  
Գարնան քարեր  
Դու վարդ արիր,  
Լո՛րիկ:  
Նման էր կարմիր խնձոր:  
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,  
Սիրո՛ւն լորիկ,  
Գարնան քարեր  
Դու վարդ արիր,  
Լո՛րիկ:

Արև դիպավ սարերուն,  
Կաքավ թռավ քարերուն,  
Լորիկ կայնե վեր դարուն:

Քար մի՛ թալի մեր դշին,  
Թող հա նստի քու թշին,  
Կրակ տու դարի՛բ փշին:

## 2. ԶԵԼԵ, ԶԵԼԵ

Զե՛լե, քե՛լե, քելքիդ մեռնեմ.  
Քո գովական խելքիդ մեռնեմ:  
Սիրավոր լորիկ,  
Վիրավոր լորիկ,  
Լորիկ,  
Սևավոր լորիկ,  
Լո՛րիկ ջան:

Զե՛լե, քե՛լե, աչիդ մեռնեմ.  
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ:

## 1. THE QUAIL

I went to the fields and chased a quail,  
I saw a girl in the valley below,  
She looked like a red apple.  
Quail,  
The spring rocks  
You turned into roses,  
Quail!  
She looked like a red apple.  
Quail, quail, quail,  
Sweet quail,  
The spring rocks  
You turned into roses,  
Quail!

The sun rose over the mountains,  
The partridge sprang onto the rocks,  
The quail stood on the hill.

Don't throw a stone at our dove,  
Let it sit on your cheek,  
Burn a fire for wandering thorns.

## 2. WALK, WALK

Walk, walk, I love your walk,  
I love your praiseful wit.  
Lovely quail,  
Brokenhearted quail,  
Quail,  
Grievous quail,  
Dear quail.

Walk, walk, I love your eyes,  
I love your sweet kiss.

### 3. ԱՆՏՈՒՆԻ

Սիրտս նման է էն փլած տներ,-  
Կոտրեր գերաններ, խախտեր է սներ.  
Բուն պիտի դնեն մեջ վայրի հավքեր.  
Երթամ՝ ձի թալեմ էն ելման գետեր.  
Ըլնիմ ձկներու ձագերացն կեր:  
Ա՛յ, տո լա՛ճ տնավեր:

Սև ծով մ'եմ տեսե, սիպտակն էր բոլոր,  
Ալին կզարներ, չէր խառնի հիրոր.  
Էն ո՞րն է տեսե մեկ ծովն երկթավոր,-  
Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր:  
Ա՛խ, իսկի մի՛ լնիք սրտիկ սևավոր:  
Ա՛յ, տո լա՛ճ տնավեր:

### 4. ԳԱՐՈՒՆ Ա

Գարուն ա, ձուն ա արել,  
Վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,  
Վա՛յ, լե, լե, լե, լե՛.

Իմ յարն ինձնից ա սառել:  
Ա՛խ, չորնա՛, վա՛խ, ա՛յ յար,  
Չար մարդու լեզուն:

Յա՛ր, ինձ մենակ թողիր,-  
Սերդ ինձնե զատ արիր:

### 3. ANTOUNI [Homeless]

My heart is a ruined house.  
The timbers are broken, the pillars dislocated.  
The wild birds will nest inside.  
I shall throw myself into the river,  
I will be food for the fish.  
Ah, your home is destroyed!

I saw a black sea, with white around,  
The waves were crashing, but they could not mix them together.  
Who has seen a double sea?  
The heart of the homeless is turbid and misled.  
Oh, don't have a grieving heart,  
Ah, your home is destroyed!

### 4. IT'S SPRING

It's spring, it's snowy,  
Vay, le, le, vay, le, le,  
Vay, le, le, le, le.

My beloved has cooled from me.  
Ah, darling, alas,  
May the bad man's tongue wither!

My love, you left me alone,  
You took your love away from me.

## 5. ԵՍ ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարեն կուգայի,  
Դուն դուռը բացիր.  
Ձեռդ ծոցդ տարար,  
Ա՛խ արիր. լացիր:  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառվում եմ,  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալվում եմ,  
Հալվում, վառվում եմ:

Ես մի չոր ծառ էի,  
Դու գարնան արև.  
Քո սիրով ծաղկեցավ  
Իմ ճյուղն ու տերև:

## 6. ԾԵՄ ԿՐՆԱ ԽԱՂԱ

Ծե՛մ, չե՛մ, չե՛մ կրնա խաղա,  
Ծե՛մ, չե՛մ, չե՛մ կրնա խաղա,  
Մաս փափուջս կճոճոա,  
Անոթի փորս կգոգոա:

Ծե՛մ, չե՛մ, չե՛մ կրնա խաղա,  
Ծե՛մ, չե՛մ, չե՛մ կրնա խաղա,  
Վարդ կոշիկս կճոճոա,  
Կեսուրս կգա կվովոա:

## 5. I WAS COMING FROM THE MOUNTAIN

I was coming from the mountain,  
You opened the door.  
You touched your hand to your bosom,  
You sighed and cried.  
Vay, vay, vay, I am burning!  
Vay, vay, vay, I am melting!  
I am melting, I am burning.

I was a dry tree,  
You were a spring sun.  
My branches and leaves  
Blossomed by your love.

## 6. I CAN'T SING AND DANCE

I can't, I can't, I can't sing and dance,  
I can't, I can't, I can't sing and dance,  
My soft shoes creak,  
My hungry stomach rasps.

I can't, I can't, I can't sing and dance,  
I can't, I can't, I can't sing and dance,  
My unpaired shoes creak,  
My mother-in-law comes to quarrel.



## 7. ՁԻՆՉ ՈՒ ՁԻՆՉ

Չի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն:  
Չոմա գոմա էր:  
Չիմ լաչակ տամ լողվորչուն:  
Քոմա քոմա էր:  
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,  
Չոմա գոմա էր:  
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:  
Քոմա քոմա էր:

Չի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն:  
Չիմ մեջկապ տամ լողվորչուն:  
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,  
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:

Չի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն:  
Չիմ շապիկ տամ լողվորչուն:  
Ո՛չ էառ, ո՛չ հավնեցավ,  
Ո՛չ եհան ծամկալ ծովեն:

Չի՞նչ ու զի՞նչ տամ լողվորչուն:  
Լուսնակ գիշեր պագ մի տվի:  
Հետ էառ, հետ հավնեցավ,  
Հետ եհան ծամկալ ծովեն:

## 8. ՉԻՆԱՐ ԵՍ

Չիևար ես, կեռանա՛լ մի,  
Յա՛ր, յա՛ր, յա՛ր.  
Մեր դռներն հեռանա՛լ մի,  
Յա՛ր, յա՛ր, յա՛ր.  
Յա՛ր, նա նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:  
Նայ նա՛յ, նայ նա՛յ, նա՛յ:

Ինձանից հեռացել ես՝  
Աչքերս լիքը լաց ա:

## 7. WHAT, WHAT?

What, what should I give to the swimmer?  
It was a pasture.  
I will give my headscarf to the swimmer,  
It was everything.  
He didn't take, he didn't like it,  
It was a pasture.  
He didn't take the hairpin from the sea,  
It was everything.

What, what should I give to the swimmer?  
I will give my belt to the swimmer,  
He didn't take, he didn't like it,  
He didn't take the hairpin from the sea.

What, what should I give to the swimmer?  
I will give my shirt to the swimmer,  
He didn't take, he didn't like it,  
He didn't take the hairpin from the sea.

What, what should I give to the swimmer?  
I kissed him on a moonlight night.  
He took it, he liked it,  
He took the hairpin from the sea.

## 8. YOU ARE A PLANE TREE

You are a plane-tree, don't bend,  
Dearling, darling, darling.  
Do not leave from our door,  
Dearling, darling, darling.  
Darling, na nay, nay, nay, nay, nay.  
Nay, nay, nay, nay, nay.

You left me,  
My eyes are full of tears.

## 9. ՀՈՅ ՆԱԶԱՆ

Հո՛յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,  
Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,

Նա՛զան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր-խոր ձորերով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես,  
Հո՛յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,  
Ինձ համար աղունիկ ես,  
Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,  
Գլխիս վրով պտիտ տուր,  
Հո՛յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,  
Նախշուն-թև թիթեռնիկ ես,  
Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,

Յա՛ր ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Խոր-խոր ձորերով եկար:

## 10. ԿՈՌԻՆԿ

Կո՛ռՆԵՆԿ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ.  
Կո՛ռՆԵՆԿ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս:

Ինձ պատասխան չտվիր, ելար գնացիր,  
Կո՛ռՆԵՆԿ, մեր աշխարհեն գնա՛, հեռացիր:

## 9. HEY NAZAN

Hey, my Nazan, my Nazan,  
Jan, my Nazan, my Nazan,

Nazan, you are welcome,  
You came over the green mountains,  
You came through the deep valleys.

You are a nice spring flower,  
Hey, my Nazan, my Nazan,  
You are a dove, for me,  
Jan, my Nazan, my Nazan,  
You circle above my head,  
Hey, my Nazan, my Nazan,  
You are a colorfully-winged butterfly,  
Jan, my Nazan, my Nazan,

My love, you are welcome,  
You came over the green mountains,  
You came over the deep valleys.

## 10. THE CRANE

Crane, where are you coming from?  
I am a servant of your voice.  
Crane, do you have news from our country?  
You didn't answer me, you left,  
Crane, go away and leave our country!

## 11. ԶՈՒՆ ԵՂԻՐ, ՊԱԼԱՍ

Զո՛ւն Էղիր, պալա՛ս, աչքդ խուփ արա,  
Նախշուն աչքերուդ քուն թող գա վրա:  
Օր, օր, օր, պալա՛ս,  
Օր, օր ու նանի,  
Իմ մնուշիկիս  
Քունը կտանի:

## 12. ԿԱՆՉԵ՛, ԿՈՌՆԵԿ

Կանչե՛, կո՛րնեկ, կանչե՛, քանի գարուն է,  
Ղարիբներու սիրտը գունդ-գունդ արուն է:  
Կո՛րնեկ ջան, կո՛րնեկ ջան, գարուն է,  
Կո՛րնեկ ջան, կո՛րնեկ ջան, գարուն է,  
Ա՛խ, սիրտս արուն է:  
Կանչե՛, կո՛րնեկ, կանչե՛, քանի արև է,  
Աշնան կերթաս երկիր, յարիս բարևե:  
Կո՛րնեկ ջան, կո՛րնեկ ջան, արև է,  
Կո՛րնեկ ջան, կո՛րնեկ ջան, արև է,  
Ա՛խ, յարիս բարևե:

## 11. REST, MY BABY

Rest, my baby, close your eyes,  
May sweetly sleep your pretty eyes!  
Lull, lull, lull, my baby,  
Lull, lull and sleep,  
My sweet baby  
Wants to sleep.

## 12. CALL, CRANE

Call, crane, call, while it is spring,  
The wanderers' heart is thick with blood.  
Dear crane, dear crane, it's spring,  
Dear crane, dear crane, it's spring,  
Oh! My heart is bloody.  
Call, you crane, call, while it is sunny,  
If you go to my homeland in autumn, greet my beloved.  
Dear crane, dear crane, it's sunny,  
Dear crane, dear crane, it's sunny,  
Oh! Greet my beloved.

### 13 զԱՐՈՒՆ

Արորն ասաց տատրակ հավքուն.  
«Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արյուն,  
Երթա լցվի բարակ առուն»:  
Տատրակն ասաց արոր հավքուն.  
«Գնաց գարուն, եկավ աշուն,  
Կտրավ ջրիկ աղբյուրներուն,  
Կտրավ խոտիկ ծաղիկներուն,  
Կտրավ ձենիկ կաքավներուն:  
Էնքան պիտի լամ երերուն,  
Արյուն կաթե իմ աչքերուն,-  
Ես ի՞նչ անեմ իմ ծագերուն»:

Ասաց. «Դու մի՛ լա ես աշուն,  
Չէ՛, վաղ կուգա բարի գարուն,  
Լույս կբացվի վեր աշխարհուն,  
Դուռ կբացվի խեղճիկներուն:  
Ես քեզ կառնեմ իմ թևերուն,  
Թռնեմ բանձրիկ վեր սարերուն,  
Բուն կդնեմ մեջ քարերուն,  
Տուն կշինեմ մեջ գագերուն,  
Երթիկ բանամ դեմ հով քամուն,  
Թռնիր թաղեմ մեջ այրերուն,  
Ծուխ կհանեմ հետ ամպերուն,  
Մեր ցավ կտանք հարավ քամուն»:

Գնաց աշուն, եկավ գարուն,  
Կաթեր ջրիկ աղբյուրներուն,  
Երթար լցվեր բարակ առուն:  
Աղբրանց-արյուն մեջ քարերուն,  
Դեղին սուսուն վեր սարերուն,  
Փունջ մանուշակ մեջ ձորերուն.  
Կանաչ կարմիր գույն-գույն ծաղկունք,  
Դաշտերն ամեն էրունք, թռչունք.  
Ձենիկ կուգա գառնիկ մաքուն,-  
Մեր ապրելիք վեր երկնքուն:

### 13. SPRING

Curlew said to turtledove:  
“Why are you crying with a handful of blood?  
It flows and floods the narrow ditch.”  
The turtledove said to curlew:  
“Spring has passed and autumn came,  
Water has stopped flowing from its source,  
The grass and flowers have stopped growing,  
The voices of the partridges have stopped.  
I will cry so much,  
Until blood drips from my eyes,  
What should I do, my children?”

It said: “Don’t cry this autumn,  
Soon the sweet spring will come, won’t it?  
A light will arise over the world,  
A door will be opened for the unfortunate.  
I will take you on my wings,  
I will fly over the high mountains,  
I will nest among the rocks,  
I will build a home among the herbs,  
I will open a window to the cool wind,  
I will put a tandoor in the rocks,  
I will make smoke with the clouds,  
We’ll render our sorrows to the southern wind.”

Autumn passed and spring has come,  
Stream-waters have started flowing again  
And poured into the narrow ditch.  
The blood of the source seeped into the rocks,  
The yellow flowers appeared on the hills,  
Bunches of violet grew in the valleys.  
Green and red flowers were all around,  
The fields were full of animals and birds.  
The voices of the lambs and the deer,  
This is our life under the sky.



#### 14. ԱԼԱԳՅԱԶ

Ալագյազ սարն ամպել ա,  
Վա՛յ, լե՛, լե, լե՛, լե, լե՛, լե, լե՛.  
Աղբեր իր ձին թամբել ա:  
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբեր իր ձին թամբել ա:  
Յարոջ դռներն անցել ա:

#### 15. ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դռանը խնկի ծառ,  
Գյուլո՛ւմ ջան,  
Ձեր դռանը խնկի ծառ,  
Գյուլո՛ւմ ջան,  
Խնկենին ա բերել բար,  
Գյուլո՛ւմ ջան.  
Իմ խորոտիկ, պզտիկ յար:  
Գյուլո՛ւմ ջան:

Մեր դռանը խնկի ծառ,  
Նախշուն բլբուլ վրեն թառ.

Երթար ու գար, շորոր տար,  
Սիրուն յարին օրոր տար:

#### 14. ALAGYAZ

Alagyaz Mountain is cloudy,  
Vay, le, le, le, le, le, le,  
The brother has saddled the horse,  
My dear mother, my dear mother.

The brother has saddled the horse.  
He has passed by the lover's house.

#### 15. INCENSE TREE

An incense tree in our yard,  
My flower,  
An incense tree in your yard,  
My flower.  
The incense tree has blossomed,  
My flower,  
My pretty, little love,  
My flower.

An incense tree in our yard,  
With a sweet bird settled to roost,


Ambling back and forth,  
Swaying my beautiful beloved.

# HASMIK TOROSYAN

Hasmik Torosyan was born in Yerevan, Armenia. She graduated from the Romanos Melikyan Music College where she studied with T. Hambardzumyan; and from the Yerevan Komitas State Conservatory, where she studied with G. Geghamyan. Hasmik won a number of national and international awards, including the First Prize and Golden Medal in the Armenian Republic Competition named after Gohar Gasparian; the President's Prize and Gold Medal for Young Singers of Armenia; the First Prize in the *Bella voce* international competition in Moscow, and was a finalist at the 6th Seoul International Music Competition.

In 2011, she was awarded the First Prize in the *Musica Sacra* international competition in Rome, and on that same year she became a soloist of the Armenian National Academic Opera and Ballet Theater, A. Spendiaryan.

In 2014, she studied at the Rossini Academy in Pesaro, under A. Zedda's direction, and it was in Pesaro where she made her Italian debut at the Rossini Opera House, performing the role of Corina in *Il viaggio a Reims*.



Since 2015, she has been developing an intense international career performing in prestigious opera theaters and concert halls such as the Teatro Comunale di Bologna, Teatro Filarmonico di Verona, Teatro di San Carlo, Teatro Verdi Salerno, Teatro Lirico di Cagliari, Teatro Regio di Torino, Teatro Regio di Parma, Teatro Massimo di Palermo, Maggio Musicale Fiorentino, Teatro di Roma, Antwerp Flemish Opera House, Hamburg Opera House, Théâtre des Champs-Élysées in Paris, New National Opera Theater Tokyo (NNTT), Flagey in Brussels, Boston Symphony and Paris Philharmonic Concert Halls.

Hasmik has performed the following roles: Lisette in Rossini's *La Gazzetta* at the Rossini Opera Festival (ROF), Marfa in Rimsky-Korsakov's *The Tsar's Bride* with the National Orchestra of Paris (cond. by M. Yurovsky), Ilia in Mozart's *Idomeneo*, the Queen of the Night in Mozart's *The Magic Flute*, Susanna in Mozart's *Marriage of Figaro*, Fiorilla in Rossini's *Il turco in Italia*, Marie in Donizetti's *La fille du régiment*, Gilda in Verdi's *Rigoletto* (cond. by D. Oren), Violetta in Verdi's *La traviata*, Mimì in Puccini's *La Bohème*, Musetta in the same opera (cond. M. Mariotti), Sofia in Rossini's *Il Signor Bruschino*, Norina in Donizetti's *Don Pasquale*, Rossini's *Petite messe solennele*, Orff's *Carmina Burana* cantata, and Anoush in Tigranyan's *Anoush*.

Noteworthy performances were her Amina in Bellini's *La sonnambula*, at the Teatro Regio Torino and her opening of the theater's following season with role of Leila in Bizet's *Les pêcheurs de perles*. In 2022, Hasmik performed the same role at the Teatro Colón, in Buenos Aires, to great acclaim. In 2021, Hasmik enriched her repertoire with another beautiful role, this time Queen Elizabeth in A. Toma's *A Midsummer Night's Dream* at the Wexford Opera Festival, in Ireland.

Հասմիկ Թորոսյանը ծնվել է Երևանում: Ավարտել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը (դաս.՝ Թ. Համբարձումյան) և Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիան (պրոֆ.՝ Գ. Գեղամյան):

Հասմիկն արժանացել է մի շարք հանրապետական և միջազգային մրցանակների, այդ թվում՝ առաջին կարգի մրցանակ և ոսկե մեդալ Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների հանրապետական մրցույթում, ՀՀ Նախագահի երիտասարդական մրցանակ և ոսկե մեդալ, Մոսկվայում տեղի ունեցած 16-րդ «Գեղեցիկ ձայն» միջազգային մրցույթում արժանացել է առաջին կարգի մրցանակի, Սեուլի 6-րդ միջազգային երաժշտական մրցույթի եզրափակիչ փուլի մասնակից է: 2011 թ. Հռոմում կայացած (Musica Sacra) միջազգային մրցույթում արժանացել է առաջին կարգի մրցանակի:

2014 թ. ուսանել է Ջ. Ռոսսինիի անվան ակադեմիայում՝ դիրիժոր Ա. Ձեդդայի ղեկավարությամբ, և հենց Ռոսսինիի ծննդավայր Պեզարո քաղաքում էլ կայացել է նրա առաջին իտալական բեմելը: Ջ. Ռոսսինիի անվան օպերային թատրոնում երգչուհին կատարել է Կորինայի դերերգը «Ճանապարհորդություն դեպի Ռեյմս» օպերայում:

2015 թվականից ի վեր նա միջազգային ակտիվ գործունեություն է ծավալում՝ ելույթներ ունենալով հեղինակավոր այնպիսի օպերային թատրոններում և համերգասրահներում, ինչպիսիք են. Բոլոնիայի քաղաքային թատրոնը (Teatro Comunale di Bologna), Վերոնայի ֆիլհարմոնիկ թատրոնը (Teatro Filarmonico di Verona), Նեապոլի «Սան-Կառլո» թատրոնը (Teatro di San Carlo), Սալերնոյի Ջ. Վերդիի օպերային թատրոնը (Teatro Verdi Salerno), Կալիարիի օպերային թատրոնը (Teatro Lirico di Cagliari), Թուրինի և Պարմայի Թագավորական թատրոնները (Teatro Regio di Torino, Teatro Regio di Parma), Պալերմոյի «Մասսիմո» թատրոնը (Teatro Massimo di Palermo), Ֆլորենցիայի «Երաժշտական մայիս» թատրոնը (Maggio Musicale Fiorentino), Հռոմի օպերային թատրոնը, Անտվերպենի Ֆլամանդական օպերային թատրոնը, Համբուրգի օպերային թատրոնը, Փարիզի Գանգ Էլիզե թատրոնը (Théâtre des Champs-Élysées), Տոկիոյի Նոր ազգային օպերային թատրոնը (NNTT), Բրյուսելի (Flagey), Բոստոնի սիմֆոնիկ և Փարիզի ֆիլհարմոնիկ համերգասրահները՝ մարմնավորելով հետևյալ դերերգերը. Լիզետտա՝ Ջ. Ռոսսինիի «Լա Գաժձետտա» օպերայում՝ «Ռոսսինի օպերա փառատոն»-ում (ROF), Մարֆա՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայում՝ «Փարիզի ազգային նվագախմբի» հետ (դիր.՝ Մ. Յուրովսկի), Իլիա՝ Վ. Ա. Մոցարտի «Իդոմենեո», Գիշերային թագուհի՝ Վ. Ա. Մոցարտի «Կախարդական սրինգ», Ֆիորիլլա՝ Ջ. Ռոսսինիի «Թուրքն Իտալիայում»,



Սյուզաննա՝ Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը», Մարի՝ Գ. Դոնիցետտիի «Գնդի դուստրը», Ջիլդա՝ Ջ. Վերդիի «Ռիգոլետտո» (դիր.՝ Դ. Օրեն), Մուզետտա՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ» (դիր.՝ Մ. Մարիոտտի), Սոֆիա՝ Ջ. Ռոսսինիի «Պարոն Բրուսկինո», Նորինա՝ Գ. Դոնիցետտիի «Դոն Պասկուալե» օպերաներում, Ջ. Ռոսսինիի «Փոքրիկ հանդիսավոր պատարագ»-ը, Կ. Օրֆի «Կարմինա Բուրանա» կանտատը: Թուրինի Թագավորական թատրոնում տեղի ունեցած Վ. Բելլինիի «Լուսնոտը» օպերայում, Ամինայի դերերգի փայլուն կատարումից անմիջապես հետո, նա ստանում է առաջարկ՝ հանդես գալու թատրոնի նոր թատերաշրջանի բացմանը՝ մարմնավորելով Լեյլայի դերերգը Ժ. Բիզեի «Մարգարիտ որոնողները» օպերայում:

2021 թ-ին Հասմիկը հարստացրել է իր երկացանկը ևս մեկ գեղեցիկ դերերգով. Եղիսաբեթ թագուհի՝ Ա. Տոմայի «Ամառային գիշերվա երագ» օպերայում՝ Վեքսֆորդի օպերային փառատոնում (Wexford Opera Festival), Իռլանդիա:

2011 թ-ից ի վեր Հ. Թորոսյանը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի է: Մարմնավորել է Վիոլետտայի դերերգը՝ Ջ. Վերդիի «Տրավիատա» օպերայում, Միմիի դերերգը՝ Ջ. Պուչչինիի «Բոհեմ» օպերայում, Անուշի դերերգը՝ Ա. Տիգրանյանի համանուն օպերայում: 2022 թ-ին Հասմիկն առաջնախաղով ելույթ է ունեցել Բուենոս Այրեսի պատմական «Կոլոն» (Colón) օպերային թատրոնում՝ ներկայացնելով Լեյլայի դերերգը Ժ. Բիզեի «Մարգարիտ որոնողները» օպերայում:



## GIULIO ZAPPA

Giulio Zappa was born in Monza. He completed his musical studies under the guidance of Oleg Marshev, graduating in piano performance with the highest distinction. At the same time, he graduated in foreign languages and literatures at the State University of Milan with a thesis on Russian opera, also with the highest distinction, under the guidance of Fausto Malcovati and Francesco Degrada. Zappa trained as a repertoire pianist in Milan, in Bianca Maria Casoni's singing class. He then studied with Aldo Ciccolini and Irwin Gage, with the latter in the repertoire of vocal chamber music, which has always been Zappa's greatest passion.

Since 1996, Zappa has actively performed all around the world. He is also frequently invited as a vocal coach and collaborator in theaters and festivals across the globe. Zappa has accompanied and coached hundreds of artists of various generations in Italian and foreign opera. He has also had the opportunity to collaborate with such notable conductors and directors as Alberto Zedda, Gustav Kuhn, Antonello Allemandi, Roberto Rizzi-Brignoli, Michele Mariotti, Carlo Rizzi, M. Martone, D. Fo, Giorgio Strehler, Luca Ronconi, Michael Hampe, Pier Luigi Pizzi, J.F. Martinoty, Damiano Michieletto, Graham Vick, H. De Ana, among others.

In recent years, Zappa has successfully dedicated himself to teaching piano accompanists and singers and has been invited to various institutions, including the Bologna Opera School, the Maggio Musicale Fiorentino Academy, the Verdi Academy of Parma, the Teatro Real and the Escuela Superior de Canto in Madrid, the Tel Aviv Opera Studio, the Glyndebourne Jerwood Young Artists program, the Academy of the Bolshoi Theater in Moscow, and ISACT at the Teatro Colón in Buenos Aires, and Khio Academy Oslo.

From 2012 to 2021 he was artistic director of the Opera Studio of Tenerife, he was artistic secretary of the Donizetti Festival 2023-2024, and he is currently coordinator of the young voices project Bottega Donizetti.

He has performed in the most important halls in the world, including Teatro alla Scala in Milan, Rossini Opera Festival Pesaro, Teatro Massimo in Palermo, Wigmore Hall London, St. Petersburg Philharmonic, Bolshoy Theatre Moscow, Rudolfinum Prague, Palau de la Música Catalana Barcelona. His recent engagements include recitals in Tokyo, Kyoto, Sofia, Peralada Festival, Cadogan Hall London and participation in the recording of the complete works of Donizetti's chamber romances for Opera Rara.

Ճուլիո Ձապպան ծնվել է Մոնցայում: Երաժշտական կրթությունն ստացել է Օլեգ Մարչևի ղեկավարությամբ՝ գերազանց գնահատականներով ավարտելով դաշնամուրային ֆակուլտետը: Միևնույն ժամանակ նա ավարտել է Միլանի պետական համալսարանի օտար լեզուների և գրականության ֆակուլտետը՝ նույնպես գերազանց գնահատականներով պաշտպանելով իր ատենախոսությունը ռուսական օպերայի վերաբերյալ՝ Ֆաուստո Մալկովատիի և Ֆրանչեսկո Դեգրադայի ղեկավարությամբ: Ձապպան, որպես ռեպերտուարային դաշնակահար, վերապատրաստվել է Միլանում՝ Բիանկա Մարիա Կասոնիի երգեցողության դասարանում: Այնուհետև նա սովորել է Ալդո Չիկոլինիի և Իովին Գեյջի հետ՝ վերջինիս հետ կենտրոնանալով վոկալ կամերային երաժշտության երգացանկի վրա, որը միշտ եղել է Ձապպայի ամենամեծ կիրքը:

1996 թվականից Ձապպան ակտիվորեն հանդես է գալիս ամբողջ աշխարհում: Նրան նաև հաճախ հրավիրում են որպես վոկալի ուսուցիչ՝ համագործակցելու աշխարհի տարբեր թատրոնների և փառատոների հետ: Ձապպան նվագակցել և կրթել է իտալական և արտասահմանյան օպերայի տարբեր սերնդի հարյուրավոր արտիստների: Նա համագործակցել է այնպիսի հայտնի դիրիժորների և ռեժիսորների հետ, ինչպիսիք են՝ Ալբերտո Ձեդդան, Գուստավ Կունը, Անտոնելլո Ալլեմանդին, Ռոբերտո Ռիցցի-Բրինյոլին, Միքելե Մարիոտտին, Կառլո Ռիցցին, Մ. Մարտոնեն, Դ. Ֆոն, Ջորջո Ստրեկերը, Լուկա Ռոնկոնին, Միխայել Համփեն, Պիեռ Լուիջի Պիցցին, Ժ.Ֆ. Մարտինոտին, Դամիանո Միքիելետոն, Գրեհեմ Վիկը, Հ. Դե Մևան և այլք:

Վերջին տարիներին Ձապպան հաջողությամբ դասավանդում է դաշնամուրային նվագակցություն ու երգեցողություն և հրավիրվում է տարբեր ուսումնական հաստատություններ, այդ թվում՝ Բոլոնիայի օպերային դպրոց, Ֆլորենցիայի «Երաժշտական մայիս» ակադեմիա, Պարմայի Վերդի ակադեմիա, Մադրիդի Տեատրո Ռեալ և երգեցողության բարձրագույն դպրոց, Թել Ավիվի օպերային ստուդիա, Գլայնբուրն Ջերվուդի երիտասարդ արտիստների ծրագիր, Մոսկվայի Մեծ ակադեմիական թատրոն, Բուենոս Այրեսի «Կոլոն» թատրոնի Արվեստի բարձրագույն ինստիտուտ և Օսլոյի Խիո ակադեմիա:

2012-2021 թվականներին նա եղել է Տեներիֆեի օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավարը, 2023-2024 թվականներին՝ Դոնիցետտի փառատոնի գեղարվեստական քարտուղարը և ներկայումս հանդիսանում է Բոտտեգա Դոնիցետտիի երիտասարդ ձայներ նախագծի համակարգողը:

Նա ելույթ է ունեցել աշխարհի ամենահայտնի համերգասրահներում, այդ թվում՝ Միլանի Լա Սկալա օպերային թատրոնում, Պեզարոյի Ռոսսինի օպերային փառատոնում, Պալերմոյի Մասսիմո թատրոնում, Լոնդոնի Վիգմոր համերգասրահում, Սանկտ Պետերբուրգի ֆիլհարմոնիայում, Մոսկվայի Մեծ թատրոնում, Պրահայի Ռուդոլֆինումում, Բարսելոնայի Կատալոնյան երաժշտության պալատում:

Մենահամերգներով հանդես է եկել Տոկիոյում, Կիոտոյում, Սոֆիայում, Պերալադա փառատոնում, Լոնդոնի Կադոգան համերգասրահում և մասնակցություն է ունեցել Դոնիցետտիի կամերային ռոմանսների ամբողջական հավաքածուի ձայնագրմանը՝ Ռաոա Օպերայի համար:

# CREDITS

Executive Producers: Hasmik Torosyan and Edgardo Vertanessian

Produced by Hasmik Torosyan and Giulio Zappa

Recorded at Griffa Pianoforti, Milano, Italy, in September 2024

Recorded, edited, mixed and mastered by Edgardo Vertanessian

Artwork design by Andrew Vlasov and Tatyana Vlasova

Photos of Hasmik by Vigen Mnoyan

Photo of Giulio by Marta Bernareggi

Booklet design by Jeremy Smedes

Essay by Mher Navoyan

Catalog PRIMA068

**PRIMA**  
C L A S S I C

© & ® 2025 Prima Classic.

All trademarks and logos are protected.

All rights reserved.

Available in Hi-Res Audio (96/24), Apple Digital Masters, Amazon Ultimate HD, and Dolby ATMOS